ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱՑ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)
2019 թվականի սեպտեմբերի 14-16-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Ն. Ի. Սացի անվան Մոսկվայի պետական ակադեմիական մանկական երաժշտական թատրոն և Ռուսաստանի երաժշտական թատրոնների միությունն:

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Ն. Ի. Սացի անվան Մոսկվայի պետական ակադեմիական մանկական երաժշտական թատրոնի 55-րդ թատերաշրջանի բացմանը և «Տեսնել երաժշտությունը» խորագրով երաշտական թատրոնների միության IV փառատոնին նվիրված ասուլիսին:

Այցի ընթացքում Ն.Սացի անվ. մանկական երաժշտական թատրոնի գեղարվեստական ղեկավար Գեորգի Իսահակյանի հետ քննարկել եմ Հայաստանում մանկական երաժշտական թատրոնի խթանման քայլերը: Հանդիպել եմ նաև ԳԻՏԻՍ-ի ռեկտոր Գ.Զասլավսկու հետ:

Հանդիպել եմ Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի ղեկավարության հետ, քննարկել Հայաստանում հիմնադրամի աջակցությամբ իրականացվող նախագծերը և հեռանկարները: Գործադիր տնօրեն Ա.Իկսանովը բարձր գնահատեց մեր նախգծերի բովանդակությունն ու իրականացման մակարդակը:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Համագործակցության հաստատում Ն.Սացի անվ. մանկական երաժշտական թատրոնի փորձը Հայաստանում ներդնելու և դրա զարգացումը խթանելու ուղղությամբ:
2. Նոր նախագծերի մշակում և համատեղ իրականացում:

19.09.2019

Արայիկ Խզմալյան